




ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ
(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Ա

ՆՐԱՆԻ ԱՆՀԱՐԱՋԱՏ ԳԼՈՒԽՆԵՐ
ՏՊԱԿԻՐ ԲՆԱԳՐՈՒՄ

Սիրաքի գրքի հայերեն հնագույն թարգմանությունն առաջին անգամ հրատարակվել է առանձին գրքով՝ Այնուհետև այն միացավ 1860 թ. Վենետիկում Հ. Ա. Բագրատունու հրատարակած Աստվածաշնչին, հրատարակվելով նրա կազմում:


Այս գրքի թարգմանության ժամանակ է համարվում Ս. Գրոց մյուս գրքերի հիմնական թարգմանության ժամանակը՝ հինգե-

րորդ դարը: «Եւ զի անշուշտ սա (Սիրաքի գիրքը—Գ. Ա.) ևս առ ի նախնի հարցն մերոց զոյր թարգմանեալ, և թէ սա նոյն ինքն է առ ի նոցանէ թարգմանեալն, վկայեն ոչ միայն երանելոյն հոսորովայ և որդւոյ նորին՝ աստուածայնոյն Գրիգորի նարեկացւոյ անդատին ածեալ վկայութիւնքն ըստ իմաստից, այլ հաւաստի ևս սրբոյն Մովսէսի հորենացւոյ... Իսկ ի թարգմանութիւնս մեկնութեանց Ոսկեբերանին յովագոյն ևս գտան վկայութիւնք ի գրոց աստի... Հանդերձ այսուամենայնիւ և նախնի ոսկեղինիկ

¹ Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և թուղթ Երեմիա մարգարէի առ զերեւելսն ի Բտրելոն. Վենետիկ, 1833: Սիրաքի գրքի այս հրատարակությունը հետագայում կրկնվել է նաև 1878 թ., բայց այս նոր հրատարակությունը զարմանալիորեն վրիպել է ինչպես Հ. Գ. Զարրհանայանի, այնպես էլ Հ. Ա. Ղազիկյանի ուշադրությունից և չի գրանցված նրանց մատենագիտական հատորներում:

Սիրաքի գիրքը ոչ միայն տպագրվել, այլև գրիչների կողմից հաճախ ընդօրինակվել է Աստվածաշնչի ձեռագրերից առանձին և ծառայել է որպես բարոյախոսական դասագիրք: Այս հանգամանքն ազատություն է տվել՝ որոշ փոփոխությունների ենթարկելու գիրքը և ավելի մատչելի դարձնելու ընթերցողին: Այս ճանապարհով առաջացել է մի նոր խմբագրություն,

որը մինչև այժմ սխալմամբ դիտվել է որպես առանձին թարգմանություն և հրատարակվել է 1805 թ. Վենետիկում՝ Հ. Զոհրապյանի Աստվածաշնչի կազմում: Խմբագիրը ոչ միայն փոփոխել է թարգմանության լեզուն, այլև կրճատել, համառոտագրել է ամբողջ գիրքը: Այս խմբագրությունից բացի հայտնի են Սիրաքի գրքի լատինական Վուլգատայի հիման վրա արված երկու նոր թարգմանություններ, կատարված 17-րդ դարում Ստեփանոս Լեհացու և Ոսկան Երեանցու ձեռքով: Լեհացու թարգմանությունը, որը Հ. Ա. ճաույանի (ՀԱՐ, հ. 4, 1948, էջ 677) կողմից համարվում է տպագրված, իրականում զեռ անտիպ է (լավագույն ընդօրինակությունը տե՛ս մեր մատենագրության ձեռագիր Ն՝ 705), իսկ Ոսկան Երեանցու թարգմանությունը տպագրված է 1666 թ. Ամստերդամում, հայերեն անդրանիկ տպագիր Աստվածաշնչի կազմում:



գարուն ոճ շարագրութեան ի սմա երևեալ ի բաց առնէն զամենայն երկրայութիւնս²։ Ը. Ա. Բագրատունու այս կարծիքը հաստատում է նաև Եղիշէ արքեպ. Դուրյանը. «Արգեն Սիրաքի թարգմանութիւնը Ե գարուն վերջին քառորդին կատարուած կը թուի մեզիս³։ Հինգերորդ գարի օգտին են խոսել նաև զանազան այլ գիտնականներ, վկայակոչելով Եղիշէ Կողբացու և այլոց աշխատութիւնները, որոնց մեջ հանդիպում են քաղվածքներ Սիրաքի գրքից։

Գերմանացի գիտնական, պրոֆեսոր Ե. Կաուշը Սիրաքի գրքի հայերեն թարգմանութիւնը համարելով ամենահին և ամենաառաջնակարգ թարգմանութիւններից մեկը, գրում է. «Ս. Գրոց հայկական մյուս թարգմանութիւնների նման՝ սա ևս շատ հարազատ է (հունարեն բնագրին—Գ. Ա.) և դրսևորում է հունարենի արտասովոր իմացութիւնս⁴։

Սիրաքի գրքի հայերեն հնագույն թարգմանութիւնը հունարեն բնագրի հետ համեմատած և մեր նախնիների թարգմանչական հանճարով իրավամբ հմայված գիտնականները, սակայն, չեն նկատել, որ այդ գրքում կան երկու գլուխներ (գլ. ԺԸ, տուն 30—գլ. Ի, տուն 26), որոնց լեզուն ու ոճը բոլորովին տարբեր են նախորդ և հաջորդ գլուխներից։ Այս գլուխների մեր կատարած համեմատութիւնը հունարեն բնագրի հետ պարզեց, որ դրանք անհարազատ են նաև հունարեն բնագրին, ուստի և հանդիսանում են հետագա ժամանակների ներմուծումներ։

Այսպիսով կանգնած ենք մի հետաքրքիր փաստի առջև. Սիրաքի գրքի սկզբնական բնագրի երկու գլուխներ հետագա ժամանակներում կորել են և նրանց տեղը ներմուծվել են նոր գլուխներ։ Վերջիններիս ուսումնասիրութիւնից հայտնի է դառնում, որ այդ նոր գլուխները տառացիորեն նույնն են, ինչ որ 1805 թ. Զոհրապայանի հրատարակած Սիրաքի գրքի համապատասխան գլուխները։ Ուրեմն. գրիչներից մեկը նկատելով հնագույն թարգմանութիւնը երկու

գլուխների պակասը՝ նրանց տեղը լրացրել է այն ձեռագրերից, որոնք ընկած են Զոհրապայանի հրատարակութիւն հիմքում։ Այսպիսով՝ հինգերորդ դարի թարգմանութիւն մեջ ներմուծվել է երկու գլուխ նոր խմբագրութիւնից և իրար են խոտնվել տարբեր դարերի գործեր։

Բ

ԿՈՐԱՄ ԳԼՈՒԽՆԵՐԻ ԶԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 5608 ԶԵՌԱԳՐՈՒՄ

Վերոհիշյալ երկու անհարազատ գլուխների փոխարեն Սիրաքի գրքի սկզբնական բնագրում գտնված և հետագա դարերում կորած գլուխները մեղ հաջողվեց գտնել, Մաշտոցի անվան Մատենադարանի № 5608 ձեռագրում։ Այս հազվագյուտ ձեռագիրը պահպանել է Սիրաքի գրքի հնագույն թարգմանութիւնը մեղ ծանոթ ամենավաղ ընդօրինակութիւնը և միակն է բովանդակ հայ ձեռագրական աշխարհում, որը ժամանակի ոչնչացնող ձեռքերից փրկել և մեզ է հասցրել հիշյալ կորած գլուխները։ Որևէ այլ ընդօրինակութիւն հայտնի չէ⁵։

Նորահայտ գլուխների միջոցով ոչ միայն ամբողջանում է Սիրաքի գրքի հայերեն բնագիրը, այլև հայտնի են դառնում լեզվական հետաքրքրութիւն ներկայացնող փաստեր։ Այսպես օրինակ, նշված գլուխներում հանդիպում են մի քանի բառեր, որոնք ծանոթ չեն եղել մեր բառարանագետներին և չեն գրանցված որևէ բառարանում։ Դրանցից են՝ «ունկնարկեալ», «գետնանայեաց», «կաքաւորսորդ», «ճղճամիտ» և այլն։

Կան նաև անյայտ շարժական շփոթ հիշեցնող սխալ ընթերցումներ։ Եղիշէ պատրիարք Դուրյանը Սաղմոսների կապակցութիւնը արդեն նշել է «ալղամա-ալալալմա» օրինակը⁶, որի համաձայն հայ թարգմանիչը

² Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ, Վենետիկ, 1878, էջ 8—9։

³ Ե. Լպսկ. Դուրյան, Նորագիտ գլուխներ Սիրաքայ գրքին հին թարգմանութենէն.— «Սիոն», Երուսաղէմ, 1927, էջ 246։

⁴ Kautzsch E., Die Apokryphen und Pseudepigraphen des Alten Testaments, B 1, Tübingen, 1900, S. 249. Այս գրքի վրա մեր ուշադրութիւնը հրավիրել է հայագետ, պրոֆ.-դոկտոր Երվանդ Տեր-Մինասյանը, որին սրտանց շնորհակալութիւն ենք հայտնում։

⁵ Հնարավոր է, որ նորահայտ գլուխներն ընդօրինակված լինեն նաև Վարագա առաջնորդ Մարտիրոս վարդապետի համար 1613 թ. գրված և այժմ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանում պահվող այն ձեռագրում (գրիչ՝ Զաքարիա Մոկացի կամ Դաշտեցի), որի հիման վրա Եղիշէ պատրիարք Դուրյանը 1927 թ. «Սիոն»-ում հրատարակեց Սիրաքի գրքի հր.—հազ գլուխները։ Մեր այս ենթադրութիւն օգտին է խոսում այն փաստը, որ հր.—հազ գլուխները ընդօրինակված են նաև մեր № 5608 ձեռագրում. կնշանակի երկու ձեռագրերն էլ Սիրաքի գրքի միևնույն օրինակից են ծագում։

⁶ Եղիշէ վրդ. Դուրյան, Սրագրութիւններ մեր նախնեաց Աստուածաշնչին վրայ.— «Մասիս» շարաթաթերթ, 4. Պոլիս, 1896, թ. 8, էջ 229։

հունարեն բնագրի ձևաչափ («փոխ», «պարզ») բառը կարգացել է ձևաչափ («աղաղակ»)։ Այսպիսի մի վրիպում հանդիպում է նաև մեր հայտնաբերած գլուխներում։ Նկատի ունենք ՅՆՏՐԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ արտահայտությունը (տե՛ս ստորև, նորահայտ գլուխների բնագիրը, գլ. Ի, տուն 8, ծանոթագրություն), որը հայ թարգմանչի ձեռքին եղած հունարեն ձեռագրում գրված է եղել այնպիսի մի ձևով, որ վերծանվել է որպես ՅՆՏՐԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ և տառացիորեն թարգմանվել է «յակնհաստ»։ Այս եղանակով ստեղծվել է հայերեն մի արհեստական բառ, որը նույնիսկ իրեն կրող նախադասության մեջ զուրկ է իմաստից։

Նմանօրինակ հատուկներ վրիպումներ առկա են ոչ միայն հայերեն գերագանց թարգմանության մեջ, այլև հենց Յոթանասնից հունարեն բնագրում։ «Եկեղեցական գիտությունն ու միանգամայն յունարեն լեզուի ուսման տիրացած մեր երանելի վարդապետները,— գրում է Ե. Դուրյանը,— քաղվածություններով քաղված յաջողեցան արտադրել։ Բայց եթե բովանդակ Ս. Գիրքն իր ամեն խորութիւններովն ու գեղեցկութիւններովն ալ կարենային իմանալ, տակաւին չէին կրնար զերծ մնալ այն սխալներէն, որ կամքէ անկախ պատճառներով սարգած էին իրենց առջև գտնուած բնագրին ներշնչեալ տողերուն մէջ, և մերիներն ալ ստիպեցան անոր մերթ մթին և մերթ դժուարիմաց խօսքերուն տառակաճ փոխադրութեամբ շատանալ միայն»։

Եթե թարգմանչական վրիպումները հատուկներ են՝ նույնը չի կարելի ասել գրչական վրիպումների մասին։ Մեր հայտնաբերած գլուխներում հանդիպում են մի շարք գրչական սխալներ, որոնք մենք ուղղել ենք հունարեն բնագրի համեմատությամբ։ Այսպես օրինակ, հունարեն բնագրում խոսվում է դրամ փոխ առնելու մասին, իսկ մեր ձեռագրում «փոխ» բառը դարձել է «փողոց»։ Մեկ այլ տեղում «կորացեալ»-ը դարձել է «կուրացեալ», «թեթևասիրտ»-ը՝ «թեւասիրտ», «հաստ»-ը՝ «հոստ» և այլն։

Գ

ԽԲ—ԽԶ. ԳԼՈՒԽՆԵՐԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միրաքի գրքի սկզբնական բնագրում եղած և այժմ վերստին գտնված հիշյալ երկու գլուխներից բացի Մաշտոցի մատենադարնի № 5608 ձեռագիրը մեկ է հասցրել նաև ԽԲ—

7 Անդ, էջ 228;

ԽԶ գլուխների հնագույն ընդօրինակությունը, որը քառորդ հազարամյակով ավելի հին լինելով, բան գիտությանը մինչև այժմ հայտնի ընդօրինակությունը, լրացնում է ճշգրտում է տպագիր բնագիրը։

Այս գլուխները նույնպես երկար ժամանակ համարվում էին կորած և մինչև օրս էլ բացակայում են տպագիր Աստվածաշնչից։ Առաջին անգամ նրանք հայտնաբերվեցին այժմ Երուսաղեմում պահվող մի ձեռագրում և հրատարակվեցին «Սիրոն»-ում, 1927 թ.⁸ «Սիրոն»-ի հրատարակության համար հիմք հանդիսացած ձեռագրի մասին հրատարակիչը գրում է. «Մեր ձեռագիրը թույլ է գրչության կողմէ. ուստի և իր սխալադրութիւնները ուղղելով՝ յոյն բնագրին հետ ալ բաղդատեցինք նոյն գլուխները՝ նշանակուած համարներով»⁹։ Անվանի գիտնականը սխալագրություններն ուղղելուց բացի տողատակի ծանոթագրություններում, հունարեն բնագրի հիման վրա, վերականգնել է հայերեն թարգմանության սկզբնական բնագրում եղած այն բառերը, որոնք հետագայում աղավաղվել են։ Ի պատիվ վաստակավոր հայագետի պետք է ասել, որ նրա վերականգնած բառերից շատերը հաստատվում են մեր ձեռագրի (5608) միջոցով, որտեղ այդ րաւորը գտնում ենք հենց այն ձևով, ինչպես որ վերականգնել է Դուրյանը։ Դրանցից են, օրինակ, տաւնի (փխ. տեսանի), անդ են (փխ. անդէն), յաւրէնս (փխ. յաւուրս) և այլն։

Դուրյանի կատարած որոշ ուղղումներ էլ չնայած չեն հաստատվում մեր ձեռագրի միջոցով, բայց կիրառելի են նաև այդ ձեռագրի համար, որտեղ նույնպես տվյալ բառերն աղավաղված են։ Ստորև, ԽԲ—ԽԶ գլուխների հրատարակության մեջ, մենք օգտագործել ենք Դուրյանի այդ ուղղումները, տողատակ իշեցնելով ձեռագրի սխալագրությունները։ Ուղղումներն այնպիսին են, որ ոչ մի գիտական կասկած չեն առաջացնում։ Օրինակ. հունարեն բնագրում ասված է, որ Լուսինը նշան է հավիտենականության և ցուցում է ժամանակների։ Ձեռագրում ցուցում բառի փոխարեն գրված է ցասում, որի համաձայն ստացվում է այնպես, թե իբր Լուսինը ժամանակների ցասումն է։ Սա բացարձակ թյուրիմացություն է, ուստի և ոչ մի կասկած չկա, որ սկզբնական բնագրում ցասում-ի փոխարեն եղել է ցուցումն։ Այս կար-

⁸ Եղիշե Եպիսկոպոս Դուրյան. Նորագիտ գլուխներ Միրաքայ գրքին հին թարգմանութենէն, «Սիրոն», Երուսաղեմ, 1927, էջ 246—249։

⁹ Անդ, էջ 246։



գի ուղղումներն անառարկելիորեն ընդունելի են:

Ուղղումների որոշ մասը համընկնում է նաև Ոսկան Ծրեանցու թարգմանության հետ: Օրինակ, ԽԾ գլխի 19-րդ տան «և ծախսաց ղնոսա բոցով բարկութեան իւրոյ» արտահայտության մեջ «բարկութեան» բառը բացահայտ աղավաղում է. հունարեն բնագիրը պրա փոխարեն ունի «հրոյ»: Դուրյանը վերականգնել է այդ բառը, որը հաստատվում է նաև Ոսկան Ծրեանցու թարգմանությամբ:

Բայց կան նաև այնպիսի ուղղումներ, որոնց հետևել չենք կարող, քանի որ դրանք չեն բխում աղավաղված բառի ընձեռած հնարավորությունից: Օրինակ, ձեռագրում գրված է «օրինակ դրոշմոյ». Դուրյանը առաջարկում է ուղղել «քանդակ կնքոյ», ելնելով նրանից, որ Ելից գրքում (գլ. ԻԸ. տուն 36) հունարեն միևնույն արտահայտությունը թարգմանված է այդպես: Սա ճիշտ մոտեցում չէ, որովհետև նախ՝ գծագրական առումով «օրինակ դրոշմոյ» և «քանդակ կնքոյ» արտահայտություններն այնքան հեռու են իրարից, որ չէին կարող շփոթվել, և երկրորդ՝ հեռու են իրարից նաև Ելից գիրքը և Սիրաքի գիրքը, որոնց թարգմանիչները տարբեր մարդիկ լինելով կարող էին տարբեր ձևով թարգմանել հունարեն միևնույն արտահայտությունը: Նույնիսկ միևնույն թարգմանիչը կարող է տարբեր տեղերում տարբեր ձևերով թարգմանել միևնույն արտահայտությունը:

Ե. Դուրյանը լեզվաբանների համար արժեքավոր ցուցում է կատարել՝ մատնանշելով իր հրատարակած հատվածներում հանդիպող նոր բառեր, մասնավորապես՝ «ձընծղիթ» (հոգնակի) բառը, որը «նոր է բոլորովին իբրև հայացի բառ մը»¹⁰, Սակայն № 5608 ձեռագրում այդ բառը հանդիպում է «ծնծղիթ» ձևով և դրանով բարդացնում է բառի իրական տեսքի վերջնական որոշման գործը:

Դ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ՄՅՈՒՍ ԳԼՈՒԽՆԵՐՈՒՄ

№ 5608 ձեռագրում պահպանվել են Սիրաքի գրքի մինչև այժմ մեր քննարկած հատվածներից դուրս գտնվող մի շարք տներ, որոնք Բագրատունու Աստվածաշնչում պակասավոր են կամ աղավաղված: Այս պակասները երբեմն առիթ են տվել որոնել իրենց պատճառները: Մեր ձեռագրի միջոցով, սակայն, պարզվում է, որ տպագիր

բնագրում պակասող բեկորները պարզապես անհետացել են պատահականորեն, ընդօրինակող գրիչների անուշադրության հետևանքով: Մեր ձեռագիրը հնագույնը լինելով պահպանել է այդ բեկորները, որով և փարատվում է գիտնականների կասկածը:

Այսպիսով, Մաշտոցի անվան մատենադարանի № 5608 ձեռագրի շնորհիվ վերականգնվում է Սիրաքի գրքի հինգերորդ դարի թարգմանության սկզբնական բնագիրը, և գիտությանը հայտնի են դառնում հայ թարգմանական մտքի անզուգական կոթողներից ևս մի քանի նմուշներ. որ հրատարակում ենք ստորև:

Նախքան նորահայտ հատվածների հրատարակությունը՝ երկու խոսք № 5608 ձեռագրի մասին: Այս թանկարժեք ձեռագրի առաջին երկու պրակները (Գիրք ծննդոց, Ելք՝ թերի) ընդօրինակել է Ավետիք Սարկավազը, Հակոբ վարդապետի պատվերով: Ընդօրինակության վայրն ու ժամանակը հայտնի չեն: Հաջորդ տասնմեկ պրակները, որոնց թվում նաև Սիրաքի գիրքը, ընդօրինակված են 1363 թ. Ծրուսաղեմում, Կիրակոս գրչի ձեռքով, ներսեսի պատվերով: Այս պրակներում զետեղված են՝ Մարգարէութիւնք երկոտասան մարգարէիցն (ի տարբերություն Ս. գրոց տպագիր բնագրի՝ Զոհրապյանի հրատարակության, որի համաձայն մարգարեություններից առաջ զետեղված են բոլոր մարգարեությունների համար ընդհանուր գլխացանկերը, մեր ձեռագրում գլխացանկերը բաժանված են ըստ մարգարեությունների և զետեղված են յուրաքանչյուր մարգարեության բնագրից առաջ), Մահ երկոտասան մարգարէից, Մարգարէութիւն Դանիէլի, Մահ Դանիէլի մարգարէին, Իմաստութիւն Սիրաքայ:

Ձեռագիրը բաղկացած է 149 թղթյա թերթերից, կազմը՝ դրոշմազարդ կաշվով պատած տախտակ, մեծությունը՝ 17×12, գրությունը՝ մանր բոլորգիր: Ունի տարբեր ժամանակներում դրված հիշատակագրություններ, ինչպես նաև տասնմեկ պրակներն ընդօրինակած գրչի հիշատակարանը. «... Գրեցաւ գիրքս ի մայրաքաղաքս յԾրուսաղէմ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս և այլ բազմահաւաք սուրբ տնօրինականացս. ձեռամբ մեղապարտ և փցուն գրչի Կիրակոսի, ի վայելում և յիշատակ հոգւոյ սուրբ հօրս մերոյ ներսեսի և առաջնորդի սուրբ ուխտիս... գրեցաւ ի թուին Հայոց ՊԺԲ, մարտ ԻԴ, և Բրիստոսի փառք յաւիտեանս, ամէն»:

¹⁰ Անդ:

- Այսաւր տացէ փոխ և վազի պահանջեսցէ,
Ատելի է մարդ որ անպիսին է,
16 Մորոսն ասէ. չգոյ իմ բարեկամ և չգոն շնորհ
բարեաց իմոց,
Որք ուտեն զՎաց իմ՝ ցոփք ևն լեզուսւ:
17 Քանի՜ անգամ և ո՞րքանիք ծաղր առնիցեն զնա:
18 Գլորումն փարթար ի ղետնոյ և մի՜ ի լեզու,
Այսպէս կործանումն շարաց վաղվադակի հասցէ:
19 Առն անշնորհի՜ բանքն անղէպ,
Ի բերանս անխրատից յաճախեսցէ:
20 Ի բերանոյ յիմարի խոտեսցի առակ,
Ձի ոչ ասաց զնա ի ժամանակի իւրում:
21 Է որ խափանեալ լինի ի մեղանշնոյ՝ առ
կարատութեան,
Եւ ի հանգստեան իւրում զլշացցի:
22 Է որ կորուսանէ զհոգի իւր վասն ամաթու,
Եւ ի դիմաց անղգամի կորուսանէ զնա:
23 Է որ յազադս ամաթոյ՝ խոստանայ բարեկամի,
Եւ ստացաւ զնա թշնամի տարապարտ:
24 Բիծ շար ի մարդ՝ ստութիւն.
Ի բերանս անխրատից յաճախեսցէ:
25 Հաւազոյն է դող. բան որ ցանկորդի ի ստութիւն,
Եւ Լրկորին զկորուստ ժառանգեսցեն:
26 Բարք մարդոյ ստոյ՝ անարգութիւն,
Ամաթ նորա ընդ նմա է հանապազորդ:

II

ԽԲ—ԽԶ ԳԼՈՒԽՆԵՐ

M=Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. N° 3608,
S=ՍԽԻՆՔ, 1927, էջ 246—250:
D=Ե. Դուրյանի ուղղումները:

ԳԼՈՒԽ ԽԲ

- 25 ... Մի զմիոյ հաստատեաց զբարիս,
Եւ ո՞ յաղեսցի տեսանելով զիստս նորա:

ԳԼՈՒԽ ԽԳ

- 1 Զպերճութիւն բարձանց, զհաստատութիւն¹⁰
զտութեան,
Զտեսակ երկնի և զտեսիլ¹¹ փառաց:
2 Արեգակն տեսեալմար պատմէ զնա¹² իւր:
Անաթ զարմանալի, գործ բարձրելոյ,
3 Ի միջաբեկի իւրում ցամաքեցուցանէ զերկիր:
Եւ առաջի տաթոյ նորա ո՞ կարասցէ կալ¹³,
4 Որ փչէ ի հնոց գործով դուրոյ¹⁴.
Երեքպատիկ կիզու արեգակն զերկինս.
Շոգոլիս հրադինս¹⁵ հանէ
Եւ ծագելով զճառագայթս շրտուցանէ զաշու:
5 Մեծ է Տէր որ արար զայն,
Եւ բանիւք իւրովք զազարեցոյց¹⁶ զրնթացս նորա¹⁷:

¹⁰ M հաստատութեան, S զհաստատութեան

¹¹ D ի տեսեան կամ ի տեսիլ

¹² D յնա

¹³ M կեալ

¹⁴ D գոլոյ այն է տապոյ կամ այրման:

¹⁵ D հրադոյնս

¹⁶ D փութացոյց (աղղիւնք շփոյր ընթերցումի):

¹⁷ M զրնթացս իւր

- 6 Եւ լուսին յամենայնի¹⁸ ի ժամանակի իւրում,
Ցուցումն¹⁹ ժամանակաց և նշան յափտենից:
7 Ի լուսնոյ նշան տաւնի²⁰,
Հոսաւոր՝ մաշի ի վախճանի²¹,
8 Ամիս բոտ անուան իւրոյ է,
Անկելով զարմանապէս ի նորոգման,
Անաթ ըսեալաց²² ի բարձունս,
Ի հաստատութեան երկնից փայլէ:
9 Գեղեցկութիւն²³ երկնից՝ փառք աստեղաց,
Զարդ՝ որ յոսաւորէ ի բարձունս Տեառն²⁴,
10 Բանիւք Որոյն կացցեն ըստ ընտրութեան,
Եւ մի բախտեսցին²⁵ ի պահանջութիւն²⁶ իւրեանց:
11 Տես զաղեղն և աւրհեա զարարիչն նորա.
Կարի զեղեցիկ ի փայլելն իւրում:
12 Բոլորեաց զերկինս բոլորի փառաց.
Զուր Բարձրելոյն տարածեցին զնա:
13 Հրամանաւ նորա ճակեաց ձիւն²⁷,
Եւ փութացուցանէ զիսլատակունս զատաստանի
նորա:
14 Վասն այսորիկ բացան շտեմարանք,
Եւ թռեան ամպք իրրե զթռչունս:
15 Մեծութեամբ նորա զաւրութիւն յամպս²⁸,
Եւ բրդեցան քարինք կարկտի:
16 Եւ²⁹ տեսեալմար երեքին³⁰ լերինք.
Կամաւք նորա շնչեսցէ հարաւ:
17 Զայն որսման նորա հախատեաց զերկիր,
Եւ փութորիկ հիստոյ և խոզութիւն հողմոյ.
Իրրե զթռչունս թռուցեալս ցանէ ի վայր³¹ զձիւնս,
Եւ իրրե զմարախ որ իջանիցէ՝ էջ նորա:
18 Գեղ սպիտակութեան նորա զարմացուցէ զաշու,
Եւ շուեն³² նորա հիասցի սիրտ:

¹⁸ S յամենայն

¹⁹ MS ցասումն (ուղղումը—«ցուցումն»—Դուրյան-
նիւն է):

²⁰ S տեսանի

²¹ M վախճանի (առանց ի-նախդիրի), S և վախ-
ճանի, D ի վախճանի կամ յետ լրման

²² MS Բանականաց (ուղղումը—«բանակաց»—Դուր-
յանն է):

²³ S զեղեցկութիւն է

²⁴ D Ցոյնն Տէր (տեսաւ-ը հոսմածայն է Լուրայակաճ
լիւսգլին):

²⁵ S Քակեսցին

²⁶ S ի պահանջութիւնն

²⁷ M զձիւն S զձիւնն


²⁸ D զարագոյց զամպս

²⁹ S չիք ևւ

³⁰ MS երկրին (ուղղումը—«երկրին»—Դուրյանն է)

³¹ S ի վերայ

³² M ի շուեն, Եւ շուեն կամ Եւ շուեն ձեռք
հալմանաբար գրչական աղավաղում են: Դուրյանն ուղ-
ղում է՝ «յանձնեալ», և այս ուղղումը մեղ իրավացի է
լովում, որովհետեւ հոսմածայն լեւադիւն ունի հենց այդ
լիւստոր:



- Այսպիսի տաղէ փոխի և վաղի պահանջները,
Ատեի է մարդ որ այնպիսին է,
16 Մորոսն ասէ. չգոյ իմ բարեկամ և չոն շնորհ
բարեկամ իմոց,
Որք ուտեն Կ՛աջ իմ՝ ցոփք ևն լեզուաւ:
17 Քանի՜ անգամ և ո՛րքանիք ծաղր առնիցեն ղնաւ,
18 Գլորումն փարթար ի գետնոյ և մի՛ ի լեզուէ
Այսպէս կործանումն շարաց վաղվազակի հասցէ,
19 Անն անշնորհի՜ Բանքն անդէպ,
Ի բերանն անխրատից յաճախեցէ,
20 Ի բերանոյ յիմարի խոտիցի առակ,
Ջի ոչ ասաց ղնա ի ժամանակի իւրում,
21 Է որ խափանեալ լինի ի մեղանշիւոյ՝ առ
կարատուութեան,
Եւ ի հանգստեան իւրում զղջացի:
22 Է որ կորուսանէ զհոգի իւր վասն ամաթոյ,
Եւ ի զիմաց անդգամի կորուսանէ ղնաւ:
23 Է որ յազազս ամաթոյ՝ խոտանայ բարեկամի,
Եւ ստացաւ ղնա թշնամի տարապարտ:
24 Թի՛ չար ի մարդ՝ ստուծին,
Ի բերանն անխրատից յաճախեցէ,
25 Լաւագոյն է զոգ, քան որ ցանկորդի ի ստուծին,
Եւ երկոթին զկորուստ ժառանգեցեն:
26 Բարք մարդոյ ստոյ՝ անարգութիւն,
Ամաթ նորա ընդ նմա է հանապազորդ:

II


ԽՐ—ԽԶ ԳԼՈՒԽՆԵՆՐ

Մ=Մաշտոցի անվան մատենադարանի ձև. № 5608;
S=Սիւն, 1927, էջ 246—250;
D=Ե. Դուրյանի ուղղումները:

ԳԼՈՒԽ ԽԹ

- 25 ... Մի զմիոյ հաստատեաց զբարիս,
Եւ ո՞ յագեցցի տեսանելով զփառս նորա:
ԳԼՈՒԽ ԽԺ
1 Զպերճութիւն բարձանց, զհաստատութիւն¹⁰
զտութեան,
Զտեսակ երկնի և զտեսիլ¹¹ փառաց:
2 Արեգակն տեսլեամբ պատմէ զեկ¹² իւր:
Անաթ զարմանալի, գործ բարձրելոյ:
3 Ի միջուրէի իւրում ցամաքիցուցանէ զերկիր:
Եւ առաջի տաթոյ նորա ո՞ կարացցէ կալ¹³,
4 Որ փչէ ի հնոց գործով գոլոյ¹⁴.
Նրեքպատիկ կիզու արեգակն զլերինս.
Շոգոյիս հրադինս¹⁵ հանէ
Եւ ծագելով զճառագայթս շրտուցանէ զաշս:
5 Մեծ է Տէր որ արար զայն,
Եւ բանիւք իւրովք զազարեցոյց¹⁶ զընթացս նորա¹⁷,
¹⁰ Մ հաստատութեան, S զհաստատութեան
¹¹ D ի տեսլեան կամ ի տեսիլ
¹² D յեւ
¹³ M կեալ
¹⁴ D գոլոյ այն է տապոյ կամ այրման:
¹⁵ D հրագոյնս
¹⁶ D փութացոյց (աղիւնէ՛ շփոք ընթերցումի):
¹⁷ Մ զընթացս իւր

- 6 Եւ յուսին յամենայնի¹⁸ ի ժամանակի իւրում,
Յուշումն¹⁹ ժամանակաց և նշան յափտենիդի:
7 Ի յուսնոյ նշան տաւնի²⁰.
Լուսաւոր՝ մաշի ի վախճանի²¹,
8 Ամիս ըստ անուան իւրոյ է,
Անկող զարմանապէս ի նորոգման,
Անաթ ըստանկաց²² ի բարձունս,
Ի հաստատութեան երկնից փայլէ:
9 Գեղեցկութիւն²³ երկնից՝ փառք աստեղաց,
Զարդ՝ որ յուսաւորէ ի բարձունս Տեան²⁴,
10 Բանիւք Սրբոյն կացցեն ըստ ընտրութեան,
Եւ մի քակտեցին²⁵ ի պահանջութիւնս²⁶ իւրեանց:
11 Տես զաղեկն և աւր՝ նեա զարարիչն նորա.
Կարի զեղեցիկ ի փայլելն իւրում:
12 Բոլորեաց զերկինս բոլորի փառաց.
Ձևոր Բարձրելոյն տարածեցին ղնաւ:
13 Հրամանաւ նորա ճեպեաց ձիւն²⁷,
Եւ փութացուցանէ զփայլատակունս զատաստանի
նորա:
14 Վասն այսորիկ բացան շտեմարանք,
Եւ թռեան ամպք իրրե զթռչունս:
15 Մեծութեամբ նորա վարութիւն յամպս²⁸,
Եւ իրդեցան քարինք կարկտի:
16 Եւ²⁹ տեսլեամբ երկրին³⁰ լերինք.
Կամաւք նորա շնչեցէ հարաւ:
17 Զայն որոտման նորա նախատեաց զերկիր,
Եւ փոթորիկ հիւսիսոյ և խոզվութիւն հոգմոյ.
Իրրե զթռչունս թռուցեալս ցանէ ի վայր³¹ զձիւնս,
Եւ իրրե զմարախ որ իջանիցէ՝ էջ նորա:
18 Գեղ սպիտակութեան նորա զարմացուցէ զաշս,
Եւ շուր³² նորա խաւիցի սիրտ:

¹⁸ S յամենայն¹⁹ ՄS ցասումն (ուղղումը—«ցուցումն»—Դուրյանին է):²⁰ S տեսնի²¹ Մ վախճանի (առանց ի-նախդիրի), S և վախճանի, D ի վախճանի կամ յետ լրման²² ՄS Բանականաց (ուղղումը—«բանակաց»—Դուրյանին է):²³ S զեղեցկութիւն է²⁴ D Յոյն Տէր (տեսնեալ-ը հումանայն է երաշխակա՛ն բնագրին):²⁵ S Քակեցցին²⁶ S ի պահանջութիւնն²⁷ Մ զձիւն S զձիւն²⁸ D զարագոյց զամպս²⁹ S չի և³⁰ ՄS երկրին (ուղղումը—«երկրին»—Դուրյանին է)³¹ S ի վերայ³² Մ ի շուրջ, ի շուրջ կամ ի շուրջ ո՛նեքը հավանաբար գրական աղավաղում են: Դուրյանն ուղղում է՝ «յանձրեան», և այս ուղղումը մեզ իրավացի է թվում, որովհետև հունարէն բնագրին ունի հենց այդ իմաստը՝

- 19 Եւ զեղեանն իբրեւ զաղ յերկիր սփռէ.
Եւ սառչին ծայրք խոշացի,
20 Յուրտ հողմ հիւսիսոյ հնչիցէ,
Եւ ձողեացի³³ ծնծղիք (S ձընծղիթք)³⁴ ի չրոյ.
Յամենայն ժողովս³⁵ չուրց իչցէ,
Եւ իբրեւ³⁶ զրա՛հ զղեցցի զչուրս³⁷:
21 Կերիցէ զլերինս, և զանապատս ալրեսցէ,
Եւ շիշուցէ զգալարի իբրեւ զհուր:
22 Յաւոյ պատահեալ ի հրոյ³⁸ զուարթացուցէ:
23 Խորհրդով նորա ծփեցան³⁹ անդունդք,
Եւ անկեաց նմա կղզի⁴⁰:
24 Որք⁴¹ նաւարկեն ընդ ծով՝
Պատմեսցեն զտագնապ նորա,
Եւ լրով ականջաց մերոց սխրանամբ:
25 Եւ անդ են⁴² զարմանալիք⁴³ և⁴⁴ հրաշալի գործք⁴⁵.
Ջանազանութիւն ամենայն գաղանաց, հաստատումն
կիտից:
26 Վասն նորա յաշողութիւն⁴⁶ կատարումն⁴⁷ նորա,
Եւ բանիւ նորա գումարեալ կայ ամենայն:

³³ M ձողեացին (Դուրյանը ծանօթագրում է. «քերես՝ պաղեացին»):

³⁴ Ինչպես ծնծղիք, այնպես էլ ձընծղիթք բառերն ան-
ծանօթ բառեր են և առաջին անգամ հանդիպում են
այս հատվածում: Հայտնի չէ, քե ո՞րն է սրանցից նիշ-
տը: Դուրյանը, որ ծանօթ էր միայն ձընծղիթք ձևին,
գրում է. «այս բառը գործածուած է Gristal ՝ի նշա-
նակութեամբ, ինչպէս յայն՞ ունի»: Պետք է լրաց-
նենք, որ հունարեն բնագիրը Gristal բառը գոր-
ծածն է «սառույց»-ի իմաստով, ուստի և հայերեն
«ծնծղիք» և «ձընծղիթք» բառերի տակ թաքնված է
այս իմաստը: «Ձընծղիթք»-ը հավանաբար աղավաղ-
ված բառ է (փոխանակ «ձնծղիկք»), որին և համա-
պատասխանում է մյուս ձեռագրի «ծնծղիք» ձևը:
Թերևս կարելի է մտածել, որ «ձնծղիկք»-ը բարդ բառ
է, կառուցվածքով նման «ձնծաղիկ» բառին և հավա-
նաբար պետք է նշանակի «ձյան ծղիկք», այսինքն՝
«ձյան թևեր»: Ըստ այսմ պետք է մտածել, որ խոսքը
չրի սառչելու մասին է, և «ձողեացին ձնծղիկք ի չրոյ»
նշանակում է «չրի մեջ ձողի ձև կատանան ձյան
(=սառույցի) թևերը» շուրջ սառույց կդառնա, «և
իբրեւ զրա՛հ զղեցցի զչուրս»:

³⁵ M ժողով

³⁶ M իբր

³⁷ M զչուր

³⁸ MS ի չրոյ (ուղղումը—«ի հրոյ»—Դուրյանին է):

³⁹ D դադարեցան

⁴⁰ D տնկեաց զնա Յիսուս (մեր թարգմանիչը կար-
դացած է ԵՄՄԻՆՅԱՆ համաձայն երրայական բնա-
գրին):

⁴¹ M ոյք

⁴² S անդէն

⁴³ MS զարմանք (ուղղումը—«զարմանալիք»—Դուր-
յանին է):

⁴⁴ S ընդ

⁴⁵ S գործս

⁴⁶ M աշողութիւն

- 27 Շատ ասեմ, և ոչ եղիցուք հասու.
Եւ վախճան բանից բնաւին⁴⁸ է ինքն:
28 Փառաւորելով ո՛ւր կարացաք հանաչել.
Ջի ինքն մեծ է քան զամենայն գործս իւր⁴⁹:
29 Ա՛նաւոր Տէր և յոյժ մեծ,
Եւ սքանչելի է զորութիւն նորա:
30 Եւ փառաւորելով զՏէր,
Բարձր արարէք
Որչափ ինչ կարող իցէք,
Ջի առաւել լիցի տակաւին:
Եւ բարձրացուցանելով զնա
Յաճախեցէք զարութեամբ:
Մի խոնչիք, զի ոչ լինիցիք հասու:
31 Ո՛վ հոռի զնա և պատմեսցէ,
Եւ ո՛վ մեծացուցէ զնա որպէս էն:
32 Բաղում ծածուկք են մեծագոյն քան զայսոսիկ.
Ջի սակաւ ինչ տեսաք ի գործոց նորա:
Ջի զամենայն ինչ արար Տէր
Եւ րարկաշտից հո իմաստութիւն:

ԿՆՈՒՆ ԽԴ

Աւրեւորիւն հարանց

- 1 Աւրհնացուք զարս փառաւորս,
Եւ զհարս մեծ ծննդեամբ:
2 Բազում փառս հաստատեաց Տէր
Մեծութեամբ իւրով յաւիտենից հետէ:
3 Որք տիրէին⁵⁰ ի թագաւորութիւնս⁵¹ իւրեանց,
Եւ արք անուանիք զարութեամբ,
Որք խորհէին իմաստութեամբ իւրեանց,
Եւ պատմեցին մարգարէութեամբ⁵²:
4 Առաջնորդէին ժողովրդեան խորհրդովք,
Եւ հանճարով զարութեան ժողովրդեան⁵³,
[Բանք] իմաստունք⁵⁴ ի խրատ նոցա⁵⁵:

⁴⁷ S կատարման

⁴⁸ S բնաւին բանից

⁴⁹ Այս ամբողջ տունը ձեռագրեւում աղավաղված է
այսպէս. փառաւորել որքան որ կարացաք ցուցաներ
դիւքն: Մեծ քան զամենայն գործս իւր S փառաւորե-
լով որ կարացաք ճանաչել դիւքն. մեծ քան զամենայն
Գործս իւր: Ընեն ուղղեցինք ըստ Դուրյանի սրբագրու-
րյան:

⁵⁰ S տիրէին

⁵¹ S ղթագաւորութիւնս (փխ. ի թագաւորութիւնս)

⁵² S զամենայն մարգարէութեամբ (փխ. մարգա-
րէութեամբ):

⁵³ S ժողովրդեան

⁵⁴ MS իմաստուն (փխ. բանք իմաստունք), Ողղու-
մը—«բանք իմաստունք»—Դուրյանին է:

⁵⁵ S նորա

- 5 Խնդրէին նուագս Երդոց,
 Եւ պատմէին տաղս⁵⁶ դրով,
 6 Արք մեծատունք պարզեցաւք զարութեամբ,
 Խաղաղացեալք ի բնակութիւնս իւրեանց,
 7 Ամենեքեան սոքա յաղզս փառաւորեցան,
 Եւ յաւուրս⁵⁷ նոցա պարծանք:
 8
 Առ ի պատմել զգովութիւնս⁵⁸,
 9 Եւ Լն որոց ոչ է յիշատակ,
 Եւ կորեան որպէս ոչ լեալք:
 Եւ Եղեն որպէս ոչ Եղեալք,
 Եւ որդիք նոցա յետ նոցա:
 10 Այլ սոքա արք ողորմութեան,
 Որոց արդարութիւնքն ոչ մոռացան:
 11 Ընդ զաւակի նոցա կայ Լն⁵⁹ մնայ
 Բարի ժառանգութիւն զարմից նոցա:
 12 Եւ որդիք նոցա վասն նոցա:
 13 Եւ⁶⁰ մինչև յաւիտեանս կայ զաւակ նոցա,
 Եւ փառք նոցա ոչ Եղծցին:
 14 Մարմինք նոցա խաղաղութեամբ թաղեցան,
 Եւ անուանք⁶¹ նոցա կենդանի Են⁶² յաղզս:
 15 Զիմաստութիւն նոցա պատմեսցեն ժողովուրդք,
 Եւ զգովութիւնն պատմեսցէ Եկեղեցի⁶³,
 16 Ենովք⁶⁴ հաճոյ Եղև Տեառն և փոխեցաւ,
 Աւրինակ մտաց⁶⁵ ազգաց:
 17 Նոյ գտաւ կատարեալ արդար,
 Եւ⁶⁶ ի ժամանակի բարկութեան Եղև⁶⁷ փոխանակ⁶⁸.
 Վասն այսորիկ Եղև ջրհեղեղ⁶⁹:
 18 Ուխտ յաւիտենից հաստատեցին ընդ նմա,
 Զի մի Եղծցի ջրհեղեղաւ⁷⁰ ամենայն մարմին:
 19 Աբրահամ⁷¹ մեծ հայր բաղմութեան ազգաց,
 Եւ ոչ գտաւ նման նմա փառաւք:
 20 Որ⁷² պահեաց զօրէնս բարձրելոյն,
 Եւ Եղև յուխտի ընդ նմա,
 Ի մարմին նորա հաստատեաց⁷³ ուխտ:
 21 Վասն այսորիկ Երդմամբ հաստատեաց նմա

⁵⁶ MS տաւիզս: (Ուղղումը—«տաղս»—Դուրյանի՛նն է:
 Հունարենն ունի Է=ղ=վէպս):

⁵⁷ S յաւուրս (փխ. և յաւուրս)

⁵⁸ MS տան սկիզբը պակասում է:

⁵⁹ S չի և

⁶⁰ M չի և

⁶¹ M անուն

⁶² M կենդանի է

⁶³ M Եկեղեցիք

⁶⁴ M Ենոք

⁶⁵ Դուրյանը ծանոթագրում է. «Երեւն՝ խղճի մտաց
 (= ապաշխարութեան)»:

⁶⁶ M չի և

⁶⁷ S չի և Եղև

⁶⁸ S Փոխանակ Աղամայ

⁶⁹ S պակասում է ամբողջ տալիս

⁷⁰ M ջրհեղեղեալ

⁷¹ MS որչափ (ուղղումը—«որ»—Դուրյանի՛նն է):

⁷² S հաստատեցաւ

- Աւրինել ազգաց ի զաւակի նորա:
 22—23 Բաղմացուցանել զնա իբրեւ⁷³ զհող Երկրի,
 Եւ իբրեւ վաստեղս բարձրացուցանել զզաւակ նորա:
 Եւ ժառանգեցուցանել զնոսա ի ծովէ մինչև ի ծով,
 Եւ ի զետոյ⁷⁴ մինչև ի ծագս Երկրի:
 24 Եւ ընդ Սահակայ հաստատեաց այսպէս,
 Վասն Արրահատու հայր նորա
 Զուխտ և զաւրհնութիւն ամենայն մարդկան⁷⁵,
 25 Եւ հանգոյց ի գլուխն⁷⁶ Յակորայ:
 26 Մանեալ զնա արհնութեամբք նորա,
 Եւ Լտ նմա ժառանգութիւն⁷⁷,
 Եւ զատոյց դրամինս նորա⁷⁸,
 Ի ցեղս բաժանեաց զնա⁷⁹ Երկոտասան⁸⁰,
 27 Եւ Եհան ի նմանէ այլ⁸¹ ողորմութեան,
 Որ գտան⁸² շնորհս յաշս ամենայն մարդկան:

ՎՈՒՆԻ ԽՆ

- 1 Սիրեցեալ յԱստուծոյ և ի մարդկանէ զՄովսէս,
 Որոյ յիշատակն արհնութեամբք⁸³.
 2 Նմանեցոյց զնա փառաց սրբոց,
 Եւ մեծացոյց զնա աւիթ թշնամեաց⁸⁴,
 3 Բանիք⁸⁵ նորա նշանս կատարեաց⁸⁶,
 Եւ փառաւորեաց զնա⁸⁷ յանդիման թագաւորաց,
 Պատուէր ետ նմա առ ժողովուրդ իւր,
 Եւ Եցոյց նմա ի փառաց իւրոց:
 10 Զղևտու որբով ոսկոյ և յակընթոյ և ծիրանոյ⁸⁸,
 Գործով պէսպէս, բանիւ դատաստանի,
 յայտնութեամբք⁸⁹ ճշմարտութեան:
 11 Մանելով կարմրով, դործով ճարտարի,
 Մեծագին ակամբք քանդակաւ դրոշմի,
 Պատուածով⁹⁰ ոսկոյ, ականազործ դործով,
 Առ ի յիշատակ դրով ընդեկեղեղով,
 Իստ թուոց ցեղիցն Իսրայէլի:
 12 Պսակ ոսկի ի վերայ խորի⁹¹
 Աւրինակ դրոշմոյ⁹² սրբութեան...

⁷³ S որպէս

⁷⁴ MS դետոց

⁷⁵ M զաւրհնութիւն զամենայն մարդկան և զուխտ:

⁷⁶ M գլուխ

⁷⁷ M ժառանգութեան

⁷⁸ M նոցա

⁷⁹ M չի և զնա

⁸⁰ M յերկոտասան

⁸¹ S այս

⁸² S գտաւ

⁸³ M արհնութեամբք

⁸⁴ S չի և թշնամեաց

⁸⁵ S բանիւ

⁸⁶ D գաղարեցոյց զնշանս (Եւթ, Ը, 27, Բ. 33)

⁸⁷ M չի և զնա

⁸⁸ M ոսկոյ և յակընթով և ծիրանեալ

⁸⁹ M յայտնութեամբք

⁹⁰ MS պատուով (ուղղումը—«պատուածով»—Դուրյանի՛նն է):

⁹¹ D քանդակ կնքոյ (Եւթ, ԻԸ, 36)



- Յանկալիք աչաց դարդարեալք:
 13 Գեղեցիկ⁹³ յառաջ⁹⁴ քան զնա
 Չեղեն այսպիսիք մինչև յախտեան:
 Ե⁹⁵ ոչ զգեցաւ այնպէս⁹⁶ ալլազգի
 Բայց⁹⁷ յորզուց նորա միայն
 Եւ դարմեայք⁹⁸ նորա հանապազ:
 14 Զո՛ր նորա⁹⁹ ողջապտղեսցին¹⁰⁰ անապազ ըստ
 արլ երկիցս:
 15 Ելից Մովսէս զձեռս,
 Եւ ած զնա իւղով սրբով:
 Եւ եղև նմա ուխտ յախտենից
 Եւ զաւակի նորա յաւորս երկնից:
 Պաշտան տանել նմա հանապազ և քահանայել,
 Եւ արհնել զժողովուրդ նորա յանուն նորա¹⁰¹:
 16 Ընտրեաց զնա յամենայն կենդանեաց՝
 Մատուցանել պտուղ Տեառն,
 Խունկ և անուշահոտութիւն [ի] յիշատակ¹⁰²,
 Քաւել վասն ժողովրդեան իւրոյ:
 17 Ետ զնա ի պատմութեանս¹⁰³ իւր
 Իշխանութիւն¹⁰⁴ յուխտս իրաւանց,
 Ուսուցանել Յակոբայ վկայութիւնս,
 Եւ յարէնս¹⁰⁵ նորա կոչել զԻսրայել:
 18 Յարեան ի վերայ նորա աւտարոտիք,
 Եւ նախանձեաց ընդ նմա յանապախն:
 Արք, որք¹⁰⁶ ընդ Դաթանայ և ընդ¹⁰⁷ Արիբովնի¹⁰⁸
 Եւ ժողովն Կորիսնայ ցասմամբ և բարկութեամբ:
 19 Ետև Տէր և ոչ հաճեցաւ,
 Եւ անպաշտեաց բարկութեամբ ի սրտմտութենէ¹¹⁰
 Տեառն:

⁹² MS պակասում է ամբողջ տողը

⁹³ S գեղեցիկ

⁹⁴ S չիք յառաջ

⁹⁵ M չիք և

⁹⁶ M չիք այնպէս

⁹⁷ M բաց

⁹⁸ D զարմեայք=զարմք (տե՛ս ԽԴ. 11):

⁹⁹ S նոցա

¹⁰⁰ D Ողջապտղել քային (իբրև ողջակէղ նուիրել) այլուր չենք նաեղիպիւր, քարգմանութիւնն է շփոխ յայն քային:

¹⁰¹ M չիք նորա D ծանոթագրում է թեորա (Աստուծոյն Իսրայելի):

¹⁰² MS և յիշատակ (ուղղումը—«ի յիշատակ»—Դուրյանինն է):

¹⁰³ MS ի պատմութեանս (ուղղումը—«ի պատմութեանս»—Դուրյանինն է):

¹⁰⁴ M իշխանութիւնս

¹⁰⁵ MS յանուն (ուղղումը—«յարէնս»—Դուրյանինն է):

¹⁰⁶ S որ

¹⁰⁷ S չիք ընդ

¹⁰⁸ M Արիբովնի

¹⁰⁹ S չիք և

¹¹⁰ M սրտմտութեամբ բարկութեամբ (փխ. բարկութեամբ ի սրտմտութենէ Տեառն):

- Արար ի նոսա նշանս
 Եւ¹¹¹ ծախեաց զնոսա¹¹² բոցով հրոյ¹¹³ իւրոյ:
 20 Եւ յաւել ի փառս Ահարոնի¹¹⁴,
 Եւ ետ նմա ժառանգութիւն:
 Պտուղ առաջին արմտեաց բաժանեաց նոցա¹¹⁵
 Հաց նախնի¹¹⁶ պատրաստեաց յաղեցումն:
 21 Զի և զզոհս Տեառն կերիցեն,
 Զորս ետ [նմա] և զաւակի նորա:
 22 Բայց ի յերկիրն ժողովրդեան ոչ ժառանգեսցէ
 Եւ¹¹⁷ բաժին նորա չիք ի ժողովրդեանն,
 Զի ինքն է¹¹⁸ բաժին նորա¹¹⁹ և ժառանգութիւն,
 23 Եւ փենհէլս¹²⁰ որդի Նդիազարո՝ Լորորդ ի փառս:
 Ի նախանձել նմա ահի Տեառն
 Եւ կացուցանել զինքն¹²¹, ի վանել ժողովրդեանն
 Քաշութեամբ յաւտարութեան անձին իւրոյ,
 Եւ քաւեաց վասն Իսրայելի:
 24 Վասն այսորիկ հաստատեցաւ նմա ուխտ
 Խաղաղութեան,
 Վերակացու սրբոց¹²² և ժողովրդեան իւրոյ,
 Զի եղիցի նմա և ժողովրդեան իւրոյ
 Քահանայութեան մեծութիւն¹²³ յախտեան:
 25 Եւ ուխտ Դաւթի՝ որդու Յեսսեայ¹²⁴ ի ցեղէն
 Յուդայ,
 Ժառանգութիւն արքայի որդու՝ յորդու միայնոյ:
 Ժառանգութիւն Ահարոնի և զաւակի նորա:
 26 Տացէ Զեղ իմաստութիւն ի սիրտս Զեր՝
 Դատել ժողովուրդս նորա արդարութեամբ,
 Զի մի եղծցին բարիք ձեր,
 Եւ զփառս նոցա, յաղագս նոցա:

ԳԼՈՒԽ ԽԶ

- 1 Զարավար ի պատերազմունս Յեսու նաւայ¹²⁵
 Եւ մարգարէութեամբ յաջորդ Մովսիսի¹²⁶,
 Որ եղև ըստ անուան իւրոյ մեծ
 Ի փրկութեան ընտրելոց նորա:
 2 Խնդրել զվրէժ թշնամեաց յարուցելոց ի վերայ¹²⁷,
 Որպէսզի ժառանգեսցէ զԻսրայել¹²⁸,
 111 M չիք և
 112 M չիք զնոսա
 113 MS բարկութեան (ուղղումը—«հրոյս»—Դուրյանինն է):
 114 M Ահարոնի փառս (փխ. ի փառս Ահարոնի):
 115 MS նմա (ուղղումը—«նոցա»—Դուրյանինն է):
 116 D առաջնոցն
 117 S չիք և
 118 M չիք է
 119 M քո
 120 M փենհէլս
 121 D ի կալ նմա (փխ. կացուցանել զինքն)
 122 S որբոց
 123 M քահանայութիւն մեծութեան
 124 M չիք Յեսսեայ
 125 MS նաւեանց
 126 M յաջորդ Մովսիսի մարգարէութեամբ:
 127 M յարուցելոց ի վերայ թշնամեաց
 128 S չիք որպէսզի ժառանգեսցէ զԻսրայել

- 3 Որպէս փառաւորեցաւ ի չամբառնալ զձեռս իւր,
 և ի ձգել զսուսեր ի վերայ քաղաքացի
 Ոչ յառաջագոյն բան զնա եկաց այսպէս¹²⁹,
 Զի դպասեալովն Տեառն նա ած ի վերայ¹³⁰
 4 Ո՛չ¹³¹ ի ձեռն նորա ընդ կրունկն դարձաւ արեգակն,
 և մի արն եղեւ առ երկուս:

- 5 Դարդաց առ բարձրեալն զար
 ի նեղել զնա թշնամեացն շուրջանակի,
 և լուաւ նմա մեծ¹³² Տէր բարամբր կարկտի,
 Հղար¹³³ դարութեամբ:
 6 Հոսեաց ի վերայ ազգի պատերազմողի
 և իջմամբ կորոյս զընդդիմակացսն,
 Զի ծանիցին հեթանոսս զսպառազինութիւն նորա,
 Զի յանդիման Տեառն պատերազմ նորա...

III

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ՄՅՈՒՍ ԿԼՈՒՆՆԵՐՈՒՄ

Տպագիր Աստվածաշունչ (Վենետիկ, 1860)
 Մատուցյալն Մատենադարանի ձեռագիր N 5608

ԿԼՈՒՆ Բ

- 5 Զի ի հոր փորձի ոսկի
 և մարդ ի բովս տառապանաց:

- 5 Զի ի հոր փորձի ոսկի
 և մարդ ընտիր ի բովս տառապանաց:

ԿԼՈՒՆ Գ

- 29 Զի սիրտ խիստ
 (—պակասում է—)... ծանրացի
 ցաւոք, և մեղաւորն յաւելցէ մեղս ի վերայ մեղաց:

- 29 Զի սիրտ խիստ չարչարեցի առյապաւյ, և սիրտ
 խիստ ծանրացի ցաւոք, և մեղաւորն յաւելցէ մեղս
 ի վերայ մեղաց:

ԿԼՈՒՆ Դ

- 36 Մի լիցիս յօժար յասնույն ձեռոք, և ի տալն կար-
 կամ:

- 36 Մի եղիցի ձեռն քո կարկառեալ յասնույ և ի հա-
 տուցանելն կարկամեալ:

ԿԼՈՒՆ Ե

- 3 Մի ասիցես՝ թէ ո՞ յաղթահարեսցէ դիս, մի ասու՛ր՝
 քէ չար ինձ ով արացցէ՛. զի տէր խնդրելով խնդրես-
 ցէ ի քէն վրէժ:

- 3 Մի ասիցես թէ ո՞ յաղթահարեսցէ դիս. զի տէր
 խնդրելով խնդրեսցէ ի քէն վրէժ:

- 5 Զի Տէր երկայնամիտ է վասն դարձի քո և քաւո-
 թեան, մի յաներկիդս լինիր՝ յաւելուլ մեղս ի վե-
 րայ մեղաց:

- 5 Զի Տէր երկայնամիտ է յաղազս քաւութեան, մի
 յաներկիդս լինիր՝ յաւելուլ մեղս ի վերայ մեղաց:

- 8—10 Որդեակ, մի յապաղիցիս դառնալ առ Տէր ի
 մեղաց, զի մի առ մեղս քո մեռանիցիս: Մի յուսար
 ի դանձս ... (Պակասում է) ... անիրաւ, զի ոչ ող-
 նեսցեն քեզ յաւուր բարկութեան:

- 8 Մի՛ կար, մնար դառնալ առ Տէր և մի՛ յապաղեր
 ար յարէ:

- 9 Զի յանկարծակի ելցէ բարկութիւն Տեառն և ի ժա-
 մանակի վրէժխնդրութեան սատակումն:

- 10 Մի՛ ապաստան լինիր յինչս անիրաւս, զի ոչինչ
 ողուտ լինիցի քեզ յաւուր հարուածոց:

- 11 Մի՛ հոսիր յամենայն հողմ, և մի՛ զնար յամենայն
 շաւիղս, զի այն բաժին մեղաւորի է, և երկխօս
 մարդոյ է:

- 11 Մի՛ հոսիր յամենայն հողմ, և մի՛ զնար յամենայն
 շաւիղս: Այսպէս մեղաւորն երկխօսի:

ԿԼՈՒՆ Ժ

- 23 Զաւակ պատուական ո՞ր է մարդոյ ... (պակասում
 է)... ոչք երկնչին ի տեառնէ:
 Զաւակ անարդ ո՞ր է մարդոյ.
 ... (պակասում է) ...
 ոչք անցանն ըստ պատուիրանն:

- 23 Զաւակ պատուական ո՞ր է. դաւակ մարդոյ:
 Զաւակ պատուական ուր է. ոչք երկնչին ի տեառնէ:
 Զաւակ անարդ ո՞ր է. դաւակ մարդոյ: Զաւակ ա-
 նարդ ո՞ր է. ոչք անցանն ըստ պատուիրանն:

¹²⁹ Տ այսպէս եկաց


¹³⁰ Այս ամբողջ տողն աղավաղված է: Գորշյանն ուղ-
 ղում է այսպիսի. Տգի դպատերազմողս խնքին Տէր
 ածեր ի վերայս:

¹³¹ MS որ (ուղղումը—սո՛չ—Գորշյանիցն է)

¹³² Տ լի՛ք մեծ

¹³³ Տ Մեծ և հղար

¹ Ընդգծածը ներմուծում է:



ԳԼՈՒԽ ԺԵ

7 Ոչ եղիցի նմա հասու իմաստք մարդկան և արք
մեղատորք ոչ տեսցեն զնա:

7 Ոչ եղիցին նմա հասու մարդք անիմաստք. և արք
մեղատորք ոչ տեսցեն զնա:

ԳԼՈՒԽ ԺԶ

19 Միանգամայն լերինք և հիմունք երկրի ի հայել
նորա ի նոսա... (պակասում է)...

19 Միանգամայն լերինք և հիմունք երկրի ի հայել նո-
սա դողութեամբ երերին:

ԳԼՈՒԽ ԺԷ

16 Ո՛չ ապաքէն զտօթ զովացուցանէ ցօղ,
Սոյնպէս լաւ բան, քան զտուրս:

16 Ո՛չ ապաքէն զտօթ զովացուցանէ ցօղ,
Սոյնպէս լաւ է բան, քան զտուրս:

17 ... (պակասում է)...

17 Ո՛չ ապաքէն բան քան զտուրս բարի է, և երկոքին
ընդ առն, շնորհատորի:

և երկոքին ընդ առն շնորհատորի:

ԳԼՈՒԽ ԻԱ

6 Խնդրուածք... (պակասում է) մինչև յականջս նորա

6 Խնդրուածք աղքատի ի բերանոյ մինչև յականջս
նորա:

ԳԼՈՒԽ ԻԶ

11 Բանսարկութիւն մեծ՝ կին արքշիո, և ղխայտառա-
կանս իւր ոչ ծածկեսցէ:

11 Բարկութիւն մեծ՝ կին արքշիո և ղխայտառականս
իւր ոչ ծածկեսցէ:

12 Պոռնկութիւն կնոջ ի զբօսանս իւր ծանիցի, ի զբօ-
սանս աշաց և յարտեանունս իւր:

12 Պոռնկութիւն կնոջ ի զբօսանս աշաց և ի յօնս իւր
ծանիցի:

ԳԼՈՒԽ ԻԹ

3 Տուր փոխ մերձաւորին
ի ժամանակի...
(պակասում է).....

3 Տուր փոխ մերձաւորին ի ժամանակի պիտոյից նո-
րա, և հատո մերձաւորին ի ժամանակի:

ԳԼՈՒԽ ԽԱ

1 Զբաղումն մեծ հաստատեալ է ամենայն մարդոյ,
և լուծ ծանր ի վերայ որդոց Ադամայ, յօրէ ելա-
նելոյ մօր իւրոյ՝ մինչև յօր թաղելոյ ի մայրն ամե-
նեցուն:

1 Զբաղումն մեծ հաստատեալ է ամենայն մարդոյ,
և լուծ ծանր ի վերայ որդոց Ադամայ, յօրէ ելա-
նելոյ յորովայնէ մօր իւրոյ մինչև յօր թաղելոյ ի
մայրն ամենեցուն:

17 Շնորհք իբրև զգրախոյ յօրհնութիւնս (պակասում
է) յաւիտեան մնասցէ:

17 Շնորհք՝ իբրև զգրախոյ՝ յօրհնութիւնս, և ողոր-
մածութիւն յաւիտեան մնասցէ:

23 Բարեկամ և ընկեր որ ի ժամանակի պատահեսցեն,
և քան զերկոսին՝ կին բարի²:

23 Բարեկամ և ընկեր որ ի ժամանակի պատահեսցեն,
և քան զերկոսին՝ կին ընդ առն:

ԳԼՈՒԽ ԽԱ

16 Բարի կենաց թիւ ոչ
զոյ աւուրց, և բարի անուն մնայ յաւիտեան:

16 Բարի կենաց թիւ
զոյ աւուրց, և բարի անուն մնայ յաւիտեան:

24 Եւ ի ճշմարտութենէ Աստուծոյ և յուխտէ՝ վասն
ստութեան և ի հարկանելոյ դարմունկն ի հացս
այլոց, ի նախատանաց տալոյ և առնելոյ:

24 Եւ ի ճշմարտութենէ Աստուծոյ, և յուխտէ՝ Եւ ի
հարկանելոյ դարմունկն ի հացս այլոց, ի նախա-
տանաց տալոյ և առնելոյ:

² «Կին բարի» համապատասխանում է եթովպերեն
թարգմանութեանը, Եբրայերենն ունի «Կին խոհանո-
կամ» կրօնական տառով: S. S. Kautzsch E., Die Ap-
okryphen und Pseudepigraphen des Alten Testa-
ments, Tübingen, 1900, S. 433.

